DOI: 10.46991/BYSU:F/2023.14.2.007

THE STRUCTURAL MODEL OF DYNAMICS OF POLITICAL LOYALTY OF YEREVAN POPULATION*

Samvel Manukyan, https://orcid.org/0000-0002-9332-8640

PhD, Associate Professor, Department of Applied Sociology, Yerevan State University
E-mail: *s_manukyan@ysu.am*

Abstract. Recently the general background of political processes in Armenia is the low loyalty in Armenian society to the country's political course and the low level of trust in the party system. The article presents a model of the dynamics of general loyalty of the population, in particular loyalty to the country's political course among the population of Yerevan. The model is based on data from a representative sociological survey conducted in Yerevan in November 2022. We construct the model by the structural equation modeling method. It represents the direction and the force of various factors that influence the level of loyalty of the population. In the model the factor "Loyalty" represents the acceptability of the country's political course, trust in the political leaders, and trust in the State officials. The model shows that the factor "Revolution" determining the level of acceptability of the "velvet revolution" 2018 and the level of realization of expectations from the revolution, has the maximum influence on the level of "Loyalty". The relative strength of the factor is 0.51. The higher the realization of expectations, the higher the level of "Loyalty" all other things being equal. The second is the factor "Economy" which determines the positive perceptions of the country's economic state, positive changes over the past year, and positive expectations for the future. The relative strength of the factor is 0.22. The higher the value of the factor, the higher the "Loyalty" all other things being equal. The third is the factor "War" which determines the society's estimates of missed opportunities during the 44-day war, including the possibility to prevent the war, the possibility to reduce the losses from military defeat, and the possibility to win the war. The relative strength of the factor is -0.16. The more acutely society perceives missed opportunities, the lower the "Loyalty" other things being equal. These factors explain 48% of the variance in "Loyalty". The results of the analysis of the model and its complete structure can serve as a scientific basis for strategic planning and management in the field of problems related to the political loyalty of the population.

Key words: *structural equation modeling, political loyalty, "velvet revolution", 44-day war, strategic planning, strategic management*

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՅԱԼՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄՈԴԵԼԸ

Սամվել Մանուկյան https://orcid.org/0000-0002-9332-8640
սոց. գ. թ., ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ
Էլ. փոստ՝ *s_manukyan@ysu.am*

Ամփոփում: Ներկայումս Հայաստանում ընթացող քաղաքական գործընթաց-ների ընդհանուր համայնապատկերը՝ մարդկանց ցածր վստահությունն է երկրի

* Journal of Sociology: Bulletin of Yerevan University, Vol. 14 2(38), 2023, pp. 07-27
Received: 22.10.2023, Revised: 20.11.2023, Accepted: 22.11.2023
This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

քաղաքական զարգացումների և կուսակցական համակարգի նկատմամբ: Հոդվածում ներկայացված է Երևանի բնակչության ընդհանուր լոյալության, մասնավորապես՝ Հայաստանի քաղաքական զարգացումների նկատմամբ լոյալության դինամիկայի մոդելը: Այն կառուցվել է Երևանում 2022 թ.նոյեմբերին կատարված ներկայացուցչական սոցիոլոգիական հարցման տվյալների հիման վրա կառուցվածքային հավասարումների մոդելավորման (SEM – Structural Equation Modeling) մեթոդով: Մոդելը նկարագրում է, թե ինչ ուղղությամբ և ինչ ուժով են տարբեր գործոններն ազդում Հայաստանի հասարակության քաղաքական լոյալության վրա: Մոդելում «Լոյալություն» գործոնն արտահայտում է Հայաստանի քաղաքական ընթացքի ընդունելիությունը, վստահությունը քաղաքական առաջնորդների նկատմամբ և վստահությունը պետական պաշտոնյաների նկատմամբ: Մոդելը ցույց է տալիս, որ «Լոյալության» վրա ամենահզոր ազդեցությունն ունի «Հեղափոխություն» գործոնը, որն արտահայտում է 2018 թ. «թավշյա հեղափոխության» ընդունելիության աստիճանը և հեղափոխությունից սպասումների իրականացվածության մակարդակը: Գործոնի հարաբերական ուժը հավասար է 0.51-ի: Որքան ավելի բարձր է հեղափոխությունից սպասումների իրականացվածությունը, այնքան, մնացած հավասար պայմաններում, բարձր է «Լոյալությունը»: Իր ազդեցության ուժով երկրորդն է «Տնտեսություն» գործոնը, որն արտահայտում է Հայաստանի տնտեսության վիճակի դրական գնահատականները, նախորդ տարվա ընթացքում տնտեսական վիճակի դրական փոփոխությունները և ապագայի դրական սպասումները: Գործոնի հարաբերական ուժը հավասար է 0.22-ի: Որքան ավելի բարձր է «Տնտեսություն» գործոնի արժեքը, այնքան ավելի բարձր է «Լոյալությունը»: Իր ուժով երրորդն է «Պատերազմ» գործոնը, որն արտահայտում է 44-օրյա պատերազմում բաց թողնված հնարավորությունները, այդ թվում՝ 44-օրյա պատերազմից խուսափելու, հաղթանակի և պատերազմական կորուստները նվազեցնելու հնարավորությունները: Այս գործոնի հարաբերական ուժը -0.16 է: Որքան հասարակությունն ավելի սուր է ընկալում բաց թողնված հնարավորությունները, այնքան ավելի ցածր է «Լոյալությունը»: Բացահայտված գործոնները բացատրում են «Լոյալություն» գործոնի փոփոխականության (դիսպերսիայի) 48%-ը: Մոդելի վերլուծության արդյունքները և ամբողջական կառուցվածքը կարող են գիտական հենք ծառայել հասարակության լոյալության հետ կապված խնդիրների ռազմավարական պլանավորման և կառավարման ոլորտներում:

Բանալի բառեր – *կառուցվածքային հավասարումներով մոդելավորում, քաղաքական լոյալություն, «թավշյա հեղափոխություն», 44-օրյա պատերազմ, ռազմավարական պլանավորում, ռազմավարական կառավարում*

СТРУКТУРНАЯ МОДЕЛЬ ДИНАМИКИ ПОЛИТИЧЕСКОЙ ЛОЯЛЬНОСТИ НАСЕЛЕНИЯ ЕРЕВАНА

Самвел Манукян, https://orcid.org/0000-0002-9332-8640
к.соц.н., доцент кафедры прикладной социологии ЕГУ
Эл. почта: *s_manukyan@ysu.am*

Резюме. Общим фоном политических процессов в Армении является низкий уровень лояльности в обществе Армении к политическому курсу страны и низкий уровень доверия к партийной системе. В статье представлена модель динамики общей

лояльности населения Еревана построенная с использованием данных репрезентативного социологического опроса проведенного в Ереване в ноябре 2022 г. Модель построена посредством метода моделирования структурными уравнениями (SEM – Structural Equation Modeling). Она показывает в каком направлении и с какой силой различные факторы влияют на уровень лояльности населения. В модели фактор «Лояльность» отражает приемлемость политического курса страны, доверие к политическим лидерам и доверия к государственным чиновникам. Модель показывает, что наибольшее влияние на фактор «Лояльность» оказывает фактор «Революция», определяющий уровень приемлемости «бархатной революции» 2018 г. и уровень реализации ожиданий от революции. Относительная сила фактора равна 0,51. Чем выше уровень реализации ожиданий, тем выше уровень «Лояльности» при прочих равных условиях. Второй по силе влияния - фактор «Экономика», определяющий положительное представления об экономическом состоянии страны, позитивные изменения за прошедший год и позитивные ожидания на будущее. Относительная сила фактора составляет 0,22. Чем выше значение фактора, тем выше «Лояльность» при прочих равных условиях. Третий по силе – фактор «Война», определяющий оценки обществом упущенных возможностей в ходе 44-дневной войны, в том числе возможности предотвратить войну, снизить потери от военного поражения и возможности выиграть войну. Относительная сила фактора -0,16. Чем острее общество воспринимает упущенные возможности, тем ниже «Лояльность» при прочих равных условиях. Эти факторы объясняют 48% дисперсии фактора «Лояльность». Полная структура модели и результаты анализа модели могут служить научной основой для стратегического планирования и управления в сфере проблем связанных с политической лояльностью населения.

Ключевые слова: *моделирование структурными уравнениями, политическая лояльность, «бархатная революция», 44-дневная война, стратегическое планирование, стратегическое управление*

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Ներկայումս քաղաքական գործընթացների ընդհանուր համայնապատկերը մարդկանց ցածր վստահությունն է Հայաստանի ընդհանուր քաղաքական ընթացքի և կուսակցական համակարգի նկատմամբ: Այդ մասին են վկայում սոցիոլոգիական հետազոտությունների տվյալները:

Գծապատկեր 1-ում տրված են ամերիկյան Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI – International Republican Institute)՝ Հայաստանում 2017 թ. մայիսից մինչև 2023 թ. մարտ ժամանակահատվածում կատարած սոցիոլոգիական 12 հետազոտությունների արդյունքները:

Գծապատկեր 1[1]

Վստահությունը Հայաստանի ընդհանուր քաղաքական ընթացքի և կուսակցական համակարգի նկատմամբ



Մեկնաբանություններ գծապատկերի տվյալների վերաբերյալ[2]

Նախքան 2018 թ. հեղափոխությունը Հայաստանի հասարակության լոյալությունը Հայաստանի ընդհանուր քաղաքական ընթացքի նկատմամբ շատ ցածր էր. բնակչության ընդամենը 26%-ն էր համարում, որ «Երկիրն

[1] Աղբյուրը՝ International Republican Institute, https://www.iri.org/news/resource_type/poll/

[2] «Չունեն կուսակցական նախընտրություններ» ցուցանիշն այն անձանց թիվն է, ովքեր ի պատասխան «Եթե ընտրությունները տեղի ունենային այս կիրակի, ապա ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը» հարցի՝ կոնկրետ կուսակցություն չեն նշել, պատասխանել են՝ «Ոչ մեկին», «Չեմ գնա ընտրությունների», «Կփչացնեմ քվեաթերթիկը», «Հրաժարվում եմ պատասխանել» և «Դժվարանում եմ պատասխանել»:

2017-V հետազոտությունում «Չունեն կուսակցական նախընտրություններ» ցուցանիշը հաշվարկվել է ВЦИОМ: перед выборами в Армении повысился уровень неопределенности. Март 28, 2017. https://www.slideshare.net/mResearcher/ss-73777783 Слайд 8 հետազոտության տվյալների հիման վրա:

2017-V հետազոտությունում «Համարում են, որ երկիրն ընթանում է ճիշտ ուղղությամբ» ցուցանիշը հաշվարկվել է Armenia parliamentary election 2017: Gallup survey reveals possible favorites, 6 March 2017. https://armenpress.am/eng/news/881354/armenia-parliamentary-election-2017-gallup-survey-reveals-possible-favorites.html հրապարակման տվյալների հիման վրա:

2021-VII և 2021-XII թթ. հետազոտությունների տվյալները IRI համապատասխան հետազոտություններում բացակայում էին: Դրանք հաշվարկվել են 2021-V և 2022-V թթ. հետազոտությունների տվյալների գծային մոտարկմամբ:

2023-VII հետազոտության «Չունեն կուսակցական նախընտրություն» ցուցանիշը հաշվարկվել է Poll: More than 67 percent of respondents in Armenia expressed no confidence in Armenian PM`s statements. August 4 2023. https://arminfo.info/full_news.php?id=77885&lang=3 հրապարակման տվյալների հիման վրա:

ընթանում է ճիշտ ուղղությամբ»: Միաժամանակ, շատ բարձր էր անվստահությունը երկրի քաղաքական համակարգի նկատմամբ. բնակչության 43%-ը չուներ կուսակցական որևէ նախընտրություն: «Թավշյա հեղափոխությունից» երկու ամիս անց՝ 2018 թ. հուլիսին, այդ ցուցանիշները կտրուկ բարելավվեցին՝ լոյալությունը Հայաստանի ընդհանուր քաղաքական ընթացքի նկատմամբ դարձավ 73%, իսկ կուսակցական նախընտրություն չունեցող բնակչության թիվը նվազեց մինչև 11%: Թեպետ հեղափոխական էյֆորիայից հետո՝ 2019 թ. ընթացքում, բնակչության լոյալության մակարդակը նվազեց, սակայն այն մնում էր բավականին բարձր մակարդակի վրա: Իրավիճակը նորից կտրուկ փոխվեց 44-օրյա պատերազմում պարտությունից հետո. քաղաքական լոյալության և կուսակցական համակարգի նկատմամբ վստահության ցուցանիշները կտրուկ վատթարացան: Մասնավորապես, 2021 թ. փետրվարին բնակչության միայն 24%-ն էր համարում, որ Հայաստանն ընթանում է ճիշտ ուղղությամբ, ինչը մոտավորապես նույնն էր, ինչ նախահեղափոխական 2017 թ.: Իսկ կուսակցական համակարգի նկատմամբ անվստահությունն աճեց մինչև 56%՝ գերազանցելով 2017 թ. ցուցանիշը: 2021 թ. մայիսից մինչև 2023 թ. մարտ կուսակցական համակարգի նկատմամբ անվստահությունը աճեց՝ 59%-ից մինչև 68%, իսկ երկրի քաղաքական ընթացքի նկատմամբ վստահությունը շարունակեց մնալ ցածր մակարդակի վրա՝ 31-41%: 2023 թ. մարտին այն 36% էր:

Հետպատերազմական իրավիճակի կարևոր առանձնահատկությունն այն է, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարկանիշը պարբերաբար նշանակալիորեն գերազանցել է ցանկացած այլ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի վարկանիշը: Մասնավորապես, MPG կազմակերպության 2023 թ. օգոստոսի 4-ի հեռախոսային հարցման տվյալներով՝ «Եթե ընտրությունները կայանային այս կիրակի, ապա ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը» հարցին պատասխանել են՝ «Քաղաքացիական պայմանագրին»՝ 13.3%, երկրորդ տեղում ընթացող «Հայաստան» դաշինքին՝ 3.8%, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը 1.8%-ը, իսկ «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքին՝ 1.5%-ը[3]:

Հասարակության վստահության ցածր մակարդակը Հայաստանի ընդհանուր քաղաքական ընթացքի նկատմամբ պարունակում է հասարակական անկայունության ռիսկեր և միաժամանակ դժվարացնում է

[3] Տե՛ս Poll: More than 67 percent of respondents in Armenia expressed no confidence in Armenian PM`s statements. August 4, 2023. https://arminfo.info/full_news.php?id=77885&lang=3

պետության ռազմավարությունների իրականացումը: Մյուս կողմից՝ կուսակցական համակարգի նկատմամբ ցածր վստահությունը նշանակում է, որ Հայաստանի կուսակցական համակարգը դիսֆունկցիոնալ է. այն վատ է իրականացնում իր հիմնական հասարակական-քաղաքական գործառույթը՝ վատ է ագրեգացնում և արտահայտում պետության նկատմամբ հասարակության պահանջները: Նկարագրված իրավիճակը հատկապես վնասակար է ներկայիս բարդ և Հայաստանի համար կենսական ռիսկեր պարունակող աշխարհաքաղաքական համատեքստում:

Վերը նշված սոցիոլոգիական հետազոտություններում ներկայացված են նաև քաղաքական գործիչների վարկանիշները և տարբեր քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակները: Այդ տվյալների հիման վրա Հայաստանի փորձագիտական հանրությունն առաջ է քաշում իրարամերժ դրույթներ[4]: Երկրում տեղեկատվական դաշտի խիստ քաղաքականացված ու բևեռացված բնույթը և՛ հասարակական գիտակցությունում, և՛ փորձագիտական հանրույթում առաջացնում է կոգնիտիվ դիսոնանս. մարդիկ դժվարությամբ և հաճախ անհամարժեք են ընկալում երկրում առկա իրավիճակը: Իրարամերժ դիրքորոշումների՝ իրականությանը համապատասխանության կամ անհամապատասխանության հարցը իր պատասխանները ստանում է առավելապես սուբյեկտիվ դիտարկումների և փորձագետների քաղաքական բեռնվածքների համատեքստում:

Այդուհանդերձ, Հայաստանի գիտավերլուծական հրապարակումներում առկա են հասարակական-քաղաքական գործընթացների վերաբերյալ գիտական մեթոդներով իրականացված հավաստի հետազոտական արդյունքներ, մասնավորապես՝ Հայաստանի հասարակությունում 44-օրյա պատերազմից հետո աշխարհաքաղաքական կողմնորոշումների կառուցվածքի և դինամիկայի (Atanesyan, Mkrtichyan, 2022), ինչպես նաև՝ ռուս-ուկրաինական պատերազմի նկատմամբ Հայաստանի 18-35 տարեկան երիտասարդների դիրքորոշումների վերաբերյալ (Atanesyan, Mkrtichyan, 2023):

Ներկայացվող հոդվածում տրված է Երևանի բնակչության քաղաքական լոյալության դինամիկայի մոդելը, որը կառուցվել է կառուցվածքային

[4] Դրա լուսաբանման օրինակներ են՝ մի կողմից՝ «Ընդդիմությունը Նիկոլ Փաշինյանին պաշտոնանկ անելու շանս չունի ոչ փողոցային պայքարի, ոչ էլ իմպիչմենտի միջոցով. քաղաքագետ» (Հայկական ժամանակ, 08/09/2022, https://tinyurl.com/2x4m5sgl), իսկ մյուս կողմից՝ «Երևանցիները մերժեցին ՔՊ-ին. Արցախի նկատմամբ Փաշինյանի քաղաքականությունը երևանցիների կողմից պաշտպանված չէ» (Փաստինֆո, 09/18/2023, https://tinyurl.com/yko3gaae):

հավասարումների մոդելավորման (SEM – Structural Equation Modeling) մեթոդով (Kline, 2005)։ Այն երկրորդ սերնդի բազմաչափ վերլուծական մեթոդ է (Igolkina, Samsonova, 2018), որը լայնորեն կիրառվում է հոգեբանական, սոցիոլոգիական, կենսաբանական, էկոլոգիական և գիտական այլ ոլորտներում (Ostapenko, 2013)։ Գործոնային, ռեգրեսիոն և ուղիների վերլուծությունը (Path Analysis) կառուցվածքային հավասարումների մոդելավորման մասնավոր դեպքերն են։ Կառուցված մոդելը նկարագրում է, թե ինչ ուղղությամբ և ինչ ուժով են սահմանված լատենտ և բացահայտ փոփոխականները (գործոնները) ազդում Հայաստանի հասարակության քաղաքական լոյալության մակարդակի վրա։

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տվյալները։ Մոդելը կառուցվել է Երևանում 2022 թ. հոկտեմբերին Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի «Սոցիոլոգիա» մասնագիտության ուսանողների ուժերով կատարված սոցիոլոգիական հետազոտության տվյալների հիման վրա։ Ընտրանքի ծավալը՝ 226 անձ։ Ընտրանքը ներկայացուցչական է՝ ըստ սեռի, տարիքի և Երևանում բնակության աշխարհագրական տեղաբաշխման (ըստ համայնքների)։ Հետազոտությունը միտված էր Երևանի հասարակության գիտակցությունում հայաստանյան արդիական խնդիրների վերաբերյալ առկա շաղկապվածությունների բացահայտմանը։ Շաղկապվածությունների բացահայտման համար կրիտիկական նշանակություն ունի ոչ այնքան ընտրանքի ծավալը, որքան ընտրանքի ներկայացուցչականությունը, այսինքն՝ ընտրանքի և հասարակության հիմնական բնութագրերի համապատասխանությունը (Holbert, 2023)։

Հիմնական դրույթներ։ Հետազոտության նախագծման փուլում սահմանվել են չորս հիմնական դրույթներ՝ կոնցեպտներ, որոնք հասարակական գիտակցությունում առկա մտավոր (մենտալ) կառուցվածքներ են։ Մտավոր կոնցեպտները մարդկանց գիտակցությունում իրականության տարբեր երևույթների նկատմամբ իրենց փորձի և գիտելիքների հիման վրա ձևավորված դիրքորոշումների, գնահատականների, դրդապատճառների, արժեքների և նորմերի փոխկապակցված և բավական կայուն համալիրներ են։ Այդ համալիրները ձևավորում են մարդկանց **արձագանքներն** (պատասխանները) իրենց բովանդակային տիրույթին վերաբերող **ազդակներին** (հարցերին)։ Մաթեմատիկական տեսակետից դրանք գործոնային վերլուծությամբ բացահայտված գործոններն են։

Հետազոտությունում սահմանված կոնցեպտների միջև փոխադարձ կապերի ամբողջությունը Հայաստանի իշխանությունների նկատմամբ Երևանի հասարակության քաղաքական լոյալության հիպոթետիկ մոդելն է, որը ստուգվել (վերիֆիկացվել) է մոդելի կառուցման ընթացքում: Այդ կոնցեպտներն են.

«**Լոյալություն**» (մոդելում՝ **Loyalty**): Սա հասարակական գիտակցության այն մտավոր կառուցվածքն է (մաթեմատիկական տեսակետից՝ գործոնը), որն արտահայտում է հասարակության կողմից Հայաստանում քաղաքական զարգացումների ընդունելիությունը, վստահությունը քաղաքական առաջնորդների նկատմամբ և վստահությունը պետական պաշտոնյաների նկատմամբ:

«Տնտեսություն» (մոդելում՝ **Economy**): Հայաստանում տնտեսական վիճակի ընկալումն է: Այս մտավոր կոնցեպտն արտահայտում է Հայաստանի տնտեսության վիճակի վերաբերյալ դրական գնահատականները, նախորդ տարվա ընթացքում տնտեսական վիճակի դրական փոփոխությունները և ապագայի դրական սպասումները:

«Պատերազմ» (մոդելում՝ **War**): Այս կոնցեպտն արտահայտում է 44-օրյա պատերազմում բաց թողնված հնարավորությունները, այդ թվում՝ 44-օրյա պատերազմից խուսափելու հնարավորությունը, հաղթանակի հնարավորությունը և պատերազմական կորուստները նվազեցնելու հնարավորությունը:

«Հեղափոխություն» (մոդելում՝ **Revolution**): Այս կոնցեպտն արտահայտում է 2018 թ. «թավշյա հեղափոխության» ընդունելիության աստիճանը և հեղափոխությունից սպասումների իրականացվածության մակարդակը:

Սահմանված կոնցեպտները հետազոտությամբ անմիջականորեն գնահատել հնարավոր չէ, քանի որ դրանք իրենց բարդության պատճառով տարբեր իրավիճակներում տարբեր կերպ են դրսևորվում: Ուստի դրանք կոչվում են **թաքնված** (լատենտ) փոփոխականներ: Սրանք գնահատվում են **դիտարկված** փոփոխականների միջոցով: Վերջիններս այն փոփոխականներն են, որոնք արտապատկերում են տվյալ կառուցվածքին վերաբերվող հարցերին մարդկանց տված պատասխանները: Մոդելում **դիտարկված** փոփոխականները (հարցաթերթային հարցերի ձևակերպումները) տրված են աղյուսակ 2-ի «Կոնցեպտներ և փոփոխականներ» սյունակում:

Մոդելը: Հետազոտության շրջանակներում հիպոթեզացվել է, որ

Հայաստանի տնտեսական վիճակի («Տնտեսություն»՝ Economy), 44-օրյա պատերազմի («Պատերազմ»՝ War) և 2018 թ. հեղափոխության («Հեղափոխություն»՝ Revolution) վերաբերյալ կոնցեպտները ազդում են Հայաստանի հասարակության քաղաքական լոյալության վրա («Լոյալություն»՝ Loyalty)։ Ընդ որում, ենթադրվում է նաև, որ առաջին երեք կոնցեպտները նույնպես փոխկապակցված են, սակայն այդ փոխկապվածությունների ազդեցության ուղղության վերաբերյալ ենթադրություններ չեն կատարվել։

Հետազոտությունում հիպոթեզացված մոդելը ներկայացված է նկար 1-ում։

Նկար 1

Երևանի հասարակությունում քաղաքական լոյալության դինամիկայի մոդելը



Նկարում հիմնական չորս կոնցեպտները տրված են օվալներում: Այն ենթադրությունը, որ Economy, War և Revolution կոնցեպտներն ազդում են Loyalty կոնցեպտի վրա, ներկայացված է սլաքներով, իսկ այն, որ Economy, War և Revolution կոնցեպտները փոխկապակցված են, ներկայացված է երկկողմանի սլաքներով:

Մոդելում դիտարկված փոփոխականները ներկայացված են ուղղանկյուններով: Նկարը չծանրաբեռնելու համար ուղղանկյուններում գրված են ոչ թե հարցաթերթային հարցերի ձևակերպումները, այլ տվյալների շտեմարանում դրանց համառոտ անվանումները (տե՛ս աղյուսակ 2): Քանի որ մարդկանց գիտակցության մենթալ համալիրներն են կազմավորում իրենց բովանդակային տիրույթին պատկանող հարցերի պատասխանները (դիտարկված փոփոխականները), մոդելում այդ հարաբերությունները պատկերված են սլաքներով, որոնք ուղղված են տվյալ համալիրն արտապատկերող օվալից դեպի համապատասխան դիտարկված փոփոխականն արտապատկերող ուղղանկյունը:

Մարդու գիտակցությունը բարդ կառուցվածք է, ուստի, պետք է ենթադրել, որ ցանկացած հարցին մարդու տված պատասխանը պայմանավորված է ոչ միայն մեր սահմանած համալիրներով, այլ նաև բազմաթիվ այլ՝ ինչպես օբյեկտիվ (օրինակ՝ տարիք, կրթամակարդակ, սոցիալական կարգավիճակ և այլն), այնպես էլ սուբյեկտիվ (օրինակ՝ իշխանության հետ սերտ կապեր, դիտարկվող հարցի վերաբերյալ թույլ հետաքրքրվածություն, անձնական մասնակցություն պատերազմին և այլն) գործոններով: Այդ պատճառով դիտարկված փոփոխականներում միշտ առկա է **չհաշվառված ինֆորմացիա**, որը մոդելում ներկայացվում է «չափման սխալ» հասկացությամբ: Չափման սխալները մոդելում ներկայացված են փոքրիկ շրջանակներով, որոնցում գրված է e (error) տառը: Միմյանցից տարբերելու համար դրանք ունեն եզակի թվով համարներ: Քանի որ չափման սխալն ազդում է դիտարկված փոփոխականի արժեքի վրա, այդ պատճառով դրանք միացված են սլաքով՝ չափման սխալից դեպի փոփոխականը:

Նկար 1-ում մոդելն արտապատկերում է այն հավասարումները, որոնք արտահայտում են վերը նկարագրված կոնցեպտների (թաքնված փոփոխականների), դիտարկված փոփոխականների և չափման սխալների միջև առկա կապերը:

Մոդելի ադեկվատությունը: Մաթեմատիկական գնահատական է (կամ գնահատականների համախումբ), որը ցույց է տալիս, թե որքանով

են մոդելի կանխատեսումները համընկնում փորձնական տվյալների հետ: Ադեկվատության յուրաքանչյուր գնահատականի համար սահմանված է տեսական կամ էմպիրիկ մեկ կամ մի քանի չափանիշ, որոնց կիրառմամբ որոշվում է՝ արդյո՞ք մոդելի ադեկվատությունը բավարար է այն ընդունելու համար, թե՞ ոչ:

Կառուցվածքային հավասարումներով մոդելավորումը բավականին բարդ մեթոդ է: Այդ մոդելների ադեկվատության գնահատման համար մշակվել են 30-ից ավելի չափանիշներ: Կոնկրետ մոդելի ադեկվատության վերաբերյալ որոշումը կայացվում է այդ չափանիշների ցանկից՝ որպես կանոն 3-4 չափանիշների արժեքների դիտարկման և համադրման հիման վրա:

Աղյուսակ 1-ում տրված են կառուցվածքային հավասարումներով մոդելավորման մեթոդով կառուցված մոդելների ադեկվատության առավել հաճախ կիրառվող չափանիշները նկար 1-ում ներկայացված մոդելի համար: Աղյուսակում տրված են չափանիշի անունը, դրա գնահատված արժեքը, մոդելի ադեկվատության ընդունման համար չափանիշի սահմանային արժեքը և չափանիշի անունը հայերեն: Չափանիշների մաթեմատիկական բացատրությունները տրված են կառուցվածքային հավասարումներով մոդելավորման վերաբերյալ գրականությունում (Miljko, 2020)[5]:

Աղյուսակ 1

Մոդելի ադեկվատության չափանիշները

Չափանիշ	Հաշվարկված արժեքը	Ընդունելիության շեմ	Ծանոթագրություն
CMIN/DF	1.773	≤ 3	Մոդելի կանխատեսումների և փորձնական տվյալների միջև անհամապատասխանությունը՝ բաժանած մոդելի ազատության աստիճաններին
NFI	0.903	≥ 0.9	Մոդելի համապատասխանության նորմավորված ինդեքս
IFI	0.955	≥0.9	Աստիճանական անհամապատասխանության ինդեքս
TLI	0.919	≥ 0.9	Տակկեր-Լյուիսի ինդեքս

[5] Տե՛ս Interpret of CFA / SEM Indices of Goodness of Fit. https://easystats.github.io/effectsize/reference/interpret_gfi.html

CFI	0.953	≥ 0.9	Համեմատական համապատասխանության ինդեքս
PNFI	0.520	≥ 0.5	Ֆիքսված շահավետության նորմավորված ինդեքս
RMSEA	0.059	≤ 0.08	Մոտարկման միջին քառակուսային սխալ

Աղյուսակում ներկայացված վեց չափանիշների արժեքները բավարարում են մոդելի աղեկվատության ընդունելիության շեմային արժեքներին: Ընդ որում՝ կարևոր է նշել, որ դրանց շարքում են մոդելի որակի այն երկու չափանիշները (TLI, RMSEA), որոնց արժեքները կախված չեն ընտրանքի ծավալից (Brendt, 1998):

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մոդելի գործակիցները: Նկար 1-ում փոփոխականները և կոնցեպտները (գործոնները) միացնող սլաքների մոտ տեղադրված թվերը ցույց են տալիս դրանց միջև կապի ուժգնությունը: Դրանք համապատասխան ռեգրեսիոն հավասարումների β գործակիցներն են: Սլաքը ցույց է տալիս ազդեցության ուղղությունը, իսկ գործակիցները գտնվում են [-1; 1] միջակայքում: Դրական թիվը նշանակում է, որ ազդեցություն գործող փոփոխականի արժեքի աճը բարձրացնում է ազդեցությունը կրող փոփոխականի արժեքը: Երբ անկախ փոփոխականի արժեքն աճում է 1 ստանդարտ շեղման (σ) չափով, կախյալ փոփոխականն աճում է «ռեգրեսիոն գործակից» * σ չափով: Բացասական թիվը նշանակում է, որ ազդող փոփոխականի արժեքի աճը նվազեցնում է ազդեցությունը կրող փոփոխականի արժեքը:

Կոնցեպտները միացնող երկկողմանի սլաքների կողքին գրված թվերը ցույց են տալիս դրանց շաղկապվածության ուժը: Դրանք կոնցեպտների միջև Պիրսոնի կոռելյացիաներն են, որոնք նույնպես գտնվում են [-1; 1] միջակայքում: Դրական թիվը նշանակում է, որ երկու կոնցեպտները միաժամանակ են աճում կամ նվազում, իսկ բացասական թիվը նշանակում է, որ մի կոնցեպտի աճը շաղկապված է մյուս կոնցեպտի նվազման հետ:

Loyalty կոնցեպտի օվալի վերևի աջ կողմում գրված թիվը (0.48)

ցույց է տալիս, որ այդ կոնցեպտի փոփոխականության 48%-ը բացատրվում մյուս երեք կոնցեպտներով՝ Economy, War, Revolution: Դա Loyalty կոնցեպտին վերաբերող ռեգրեսիոն հավասարման R^2-ին է:

Նկար 1-ու տրված թվերը ներկայացված են նաև աղյուսակ 2-ի «Ազդեցության չափը» սյունակում:

Աղյուսակ 2

Երևանի հասարակությունում քաղաքական լոյալության դինամիկայի մոդելը

Կոնցեպտներ և փոփոխականներ	Ազդեցության ուղղությունը	Կոնցեպտ	Ազդեցության չափը
Loyalty	←	Revolution	.506
Loyalty	←	Economy	.220
Loyalty	←	War	-.164
Q7 Հայաստանը ճիշտ ուղղությամբ է ընթանում, թե՞ սխալ ուղղությամբ	←	Loyalty	.647
Q15 Որքանո՞վ եք վստահում Հայաստանի ներկայիս պետական պաշտոնյաներին	←	Loyalty	.925
Q14 Որքանո՞վ եք վստահում Հայաստանի քաղաքական առաջնորդներին	←	Loyalty	.931
Q29 Հնարավո՞ր էր արդյոք ավելի շուտ ավարտել 44-օրյա պատերազմը՝ խուսափելով մեծ կորուստներից	←	War	.618
Q28 Կարո՞ղ էր արդյոք, Ձեր կարծիքով, հայկական բանակը հաղթել 44-օրյա պատերազմում	←	War	.438
Q27 Հնարավո՞ր էր արդյոք խուսափել 44-օրյա պատերազմից	←	War	.707
Q3 Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն է ներկայումս տնտեսական վիճակը Երևանում	←	Economy	.541

Q4 Ինչպե՞ս է փոխվել տնտեսական վիճակը Երևանում մեկ տարի առաջվա համեմատ	←	Economy	.684
Q5 Ինչպե՞ս կփոխվի Երևանում տնտեսական վիճակը հաջորդ տարում	←	Economy	.668
Q38 Որքանո՞վ են արդարացել ձեր սպասումները 2018 թ. հեղափոխությունից	←	Revolution	.814
Q37 Որքանո՞վ էր ձեզ համար ընդունելի 2018 թվականի ապրիլի հեղափոխությունը այն ժամանակ՝ 2018 թվականին:	←	Revolution	.406

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր հիմնական նպատակն է մոդելի կիրառմամբ բազմակողմանիորեն պարզել, թե ինչպիսին է Երևանի հասարակությունում իշխանությունների նկատմամբ լոյալության դինամիկան:

Դրա համար նախ նկարագրենք մոդելի շրջանակներում «Լոյալություն» (Loyalty), «Տնտեսություն» (Economy), «Պատերազմ» (War) և «Հեղափոխություն» (Revolution) կոնցեպտների բովանդակությունները և առանձնահատկությունները:

ՄՈԴԵԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՆՑԵՊՏՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Լոյալություն»: Մոդելում «Լոյալություն» կոնցեպտի բովանդակությունը կազմավորվել է հետևյալ երեք հարցերին տրված պատասխանների մշակման միջոցով.

- Q7. «Հայաստանը ճի՞շտ ուղղությամբ է ընթանում, թե՞ սխալ ուղղությամբ»: Որքան ավելի դրական է Հայաստանի ընթացքի մասին դիրքորոշումը, այնքան ավելի բարձր է լոյալությունը Հայաստանի իշխանությունների նկատմամբ: Ըստ հետազոտության տվյալների՝ Երևանի բնակչության 29%-ը համարում էր, որ Հայաստանն ընթանում է «ճիշտ» կամ «ավելի շուտ ճիշտ» ուղղությամբ, որը բավականին ցածր ցուցանիշ է: Հիշենք, որ կոնկրետ հարցաթերթային հարցերին տրված պատասխանները՝ ընտրանքի փոքր ծավալի պատճառով, ունեն կողմնորոշիչ բնույթ: Այդուհանդերձ նկատենք, որ

ստացված արդյունքը շատ քիչ է տարբերվում IRI 2022-V համահանրապետական հետազոտության տվյալից՝ 31% (գծապատկեր 1)։ Այդ հետազոտության ընտրանքը կազմել էր 1513 հարցվող, իսկ ընտրանքային սխալը՝ ±2.5%։ Հարկ է նաև ուշադրություն դարձնել, որ այդ ցուցանիշը նախահեղափոխական 2017 թ. մայիսին կազմել էր 24%։

- Q15. «Որքանո՞վ եք վստահում Հայաստանի ներկայիս պետական պաշտոնյաներին»։ Որքան ավելի բարձր է պետական պաշտոնյաների նկատմամբ վստահությունը, այնքան ավելի բարձր է լոյալությունը։ Ըստ հետազոտության տվյալների՝ պետական պաշտոնյաներին «վստահում էր» կամ «ավելի շուտ վստահում էր» Երևանի հասարակության 16.5%-ը, որը շատ ցածր ցուցանիշ է։
- Q14. «Որքանո՞վ եք վստահում Հայաստանի քաղաքական առաջնորդներին»։ Որքան ավելի բարձր է վստահությունը քաղաքական առաջնորդների նկատմամբ, այնքան ավելի բարձր է լոյալությունը։ Ըստ հետազոտության տվյալների՝ քաղաքական առաջնորդներին «վստահում էր» կամ «ավելի շուտ վստահում էր» Երևանի հասարակության 17.4%-ը, որը շատ ցածր ցուցանիշ է։

Մոդելը (նկար 1) ցույց է տալիս, որ «Լոյալությունը» իշխանությունների նկատմամբ մեծապես պայմանավորված է պետական և քաղաքական գործիչների նկատմամբ վստահությամբ։ Երկու փոփոխականների դեպքում էլ այդ ազդեցության ուժը մոդելը գնահատել է 0.93, որը շատ մոտ է հնարավոր առավելագույն արժեքին՝ 1։ Իսկ Հայաստանում քաղաքականության ընթացքին հավանություն տալը լոյալության կառուցվածքում ունի ավելի փոքր նշանակություն (0.65)։ Այստեղից հետևություն.

- **Իշխանությունների նկատմամբ Երևանի բնակչության լոյալության կառավարման հարցում առավել կարևոր նշանակություն ունի պետական և քաղաքական գործիչների նկատմամբ վստահությունը։**

«Տնտեսություն» կոնցեպտի ընդհանուր բովանդակությունն է բնակչության դիրքորոշման բնույթը (դրական կամ բացասական) Հայաստանում տնտեսական վիճակի նկատմամբ։ Կոնցեպտը կազմավորվել է հետևյալ երեք հարցերին տրված պատասխանների միջոցով.

- Q3. «Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն է ներկայումս տնտեսական վիճակը Երևանում»։
- Q4. «Ինչպե՞ս է փոխվել տնտեսական վիճակը Երևանում մեկ

տարի առաջվա համեմատ»:

- Q5. «Ինչպե՞ս կփոխվի Երևանում տնտեսական վիճակը հաջորդ տարում»:

Ըստ հետազոտության տվյալների՝ տնտեսական վիճակի գնահատականներում ամենամեծ հատվածներն են միջին գնահատականները. մասնավորապես՝ Երևանի բնակչության 52%-ը համարում էր, որ Երևանում տնտեսական վիճակը «ոչ լավն է, ոչ՝ վատը», 37%-ը համարում էր, որ վերջին տարվա ընթացքում «վիճակը չի փոխվել», և 38%-ը համարում էր, որ հաջորդ տարվա ընթացքում «վիճակը չի փոխվի»: Ընդ որում, տնտեսության ընթացիկ վիճակի և նախորդ տարվա համեմատ վիճակի դրական և բացասական գնահատականների հարաբերակցությունը մի փոքր շեղված է դեպի բացասական գնահատականները, իսկ սպասումների տեսակետից՝ դրական և բացասական դիրքորոշումների հարաբերակցությունը շեղված է դեպի դրական գնահատականները:

Երևանում տնտեսական վիճակի վերաբերյալ գնահատականներից յուրաքանչյուրը միջին ուժով է ազդում «Տնտեսություն» կոնցեպտի վրա: Այս համատեքստում ավելի կարևոր են համեմատական գնահատականները՝ ինչպես է փոխվել վիճակը (0.68) և ինչպես կփոխվի (0.67): Հետևաբար.

- **Բնակչության շրջանում տնտեսական վիճակի վերաբերյալ մտավոր կառուցվածքի կառավարման տեսակետից առավել արդյունավետ է առկա տնտեսական վիճակի և սպասվող փոփոխությունների ուղղության շեշտադրումը:**

«Պատերազմ» կոնցեպտը կազմավորվել է 44-օրյա պատերազմի վերաբերյալ հետևյալ դիրքորոշումներն արտահայտող փոփոխականների տվյալներով.

- Q27. «Հնարավո՞ր էր արդյոք խուսափել 44-օրյա պատերազմից»: Պատասխանել է «այո» կամ «ավելի շուտ այո» հարցվածների 49%-ը: Փոփոխականի ազդեցության ուժը՝ 0.71:
- Q28. «Կարո՞ղ էր արդյոք, Ձեր կարծիքով, հայկական բանակը հաղթել 44-օրյա պատերազմում»: Պատասխանել է «այո» կամ «ավելի շուտ այո» հարցվածների 66%-ը: Փոփոխականի ազդեցության ուժը՝ 0.44:
- Q29. «Հնարավո՞ր էր արդյոք ավելի շուտ ավարտել 44-օրյա պատերազմը՝ խուսափելով մեծ կորուստներից»: Պատասխանել է «այո»

կամ «ավելի շուտ այո» հարցվածների 81%-ը: Փոփոխականի ազդեցության ուժը՝ 0.62:

Հարցերի բովանդակությունից բխում է, որ «Պատերազմ» կոնցեպտի բարձր արժեքները արտահայտում են հասարակական դժգոհությունը 44-օրյա պատերազմում բաց թողնված հնարավորությունների նկատմամբ: Ի տարբերություն դրա՝ «Լոյալություն» և «Տնտեսություն» կոնցեպտների բարձր արժեքները նշանակում են հասարակության դրական դիրքորոշումները:

«Պատերազմ» կոնցեպտի փոփոխականների ազդեցությունների համեմատությունը ցույց է տալիս, որ դրա ընդհանուր գնահատականի վրա ամենաուժեղ ազդեցությունն ունի պատերազմից խուսափելու չիրականացված հնարավորությունը (0.71), իսկ իր ազդեցության ուժով երկրորդն է պատերազմն ավելի շուտ ավարտելու չիրականացված հնարավորությունը (0.62): Հետևաբար.

- **44-օրյա պատերազմի վերաբերյալ մտավոր կառուցվածքի կառավարման հարցում հանգուցային նշանակություն ունեն այդ պատերազմից խուսափելու չիրականացված հնարավորության բացատրությունը, իսկ հետո՝ այդ պատերազմն ավելի շուտ ավարտելու չիրականացված հնարավորության բացատրությունը:**

«Հեղափոխություն» կոնցեպտը գնահատված է հետևյալ հարցերի միջոցով.

- Q37. «Որքանո՞վ էր ձեզ համար ընդունելի 2018 թվականի ապրիլի հեղափոխությունը այն ժամանակ՝ 2018 թվականին»: Այս հարցին պատասխանել է «լիովին ընդունելի էր» կամ «ավելի շուտ ընդունելի էր» Երևանի բնակչության 74%-ը: Փոփոխականի ազդեցության ուժը՝ 0.41:
- Q38. «Որքանո՞վ են արդարացել ձեր սպասումները այդ հեղափոխությունից»: Այս հարցին պատասխանել է «լիովին արդարացել են» կամ «ավելի շուտ արդարացել են» 14%-ը: Փոփոխականի ազդեցության ուժը՝ 0.81:

Մոդելը ցույց է տալիս, որ հեղափոխության նկատմամբ դրական դիրքորոշումը պայմանավորված է առավելապես սպասումների իրականացվածությամբ: Հետևաբար.

- **Հեղափոխության նկատմամբ մտավոր համալիրի կառավարման տեսակետից հանգուցային նշանակություն ունի մարդկանց գի-**

տակցությունում հեղափոխության խոստումների իրականացվածության կամ չիրականացվածության հիմնավորումները:

«ԼՈՅԱԼՈՒԹՅԱՆ» ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ «ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ», «ՊԱՏԵՐԱԶՄ», «ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ԿՈՆՑԵՊՏՆԵՐՈՎ

Այժմ նկարագրենք երեք հիմնական կոնցեպտների ազդեցությունը Հայաստանի իշխանությունների նկատմամբ լոյալության վրա:

Մոդելը ցույց է տալիս, որ Երևանի բնակչության լոյալության վրա ամենամեծ ազդեցությունն ունի հեղափոխության նկատմամբ դրական դիրքորոշումը, որի ազդեցության ուժն է 0.51: Երկրորդ տեղում է բնակչության դիրքորոշումը Հայաստանի տնտեսության նկատմամբ, որի ազդեցության չափը լոյալության վրա կազմում է 0.22: Եվ որքան էլ զարմանալի թվա, բնակչության լոյալության վրա իր ազդեցության ուժով երրորդն է պատերազմի նկատմամբ դիրքորոշումը, որի ազդեցությունը -0.16 է: Այսինքն, երբ աճում է «Պատերազմ» կոնցեպտի գնահատականը, որը 44-օրյա պատերազմի և դրա հետ կապված դժգոհությունների համալիրն է, ապա նվազում է լոյալությունը իշխանությունների նկատմամբ (գծապատկեր 1):

Գծապատկեր 2

«Հեղափոխություն», «Տնտեսություն» և «Պատերազմ» մտավոր կառուցվածքների ազդեցությունը «Լոյալություն» մտավոր կառուցվածքի վրա



Նշված երեք կոնցեպտները բացատրում են «Լոյալություն» կոնցեպտի փոփոխականության մոտ կեսը՝ 48%-ը, որը սոցիոլոգիական հետազոտությունների տվյալներով կառուցված ռեգրեսիոն մոդելների դեպքում բավա-

կանին բարձր ցուցանիշ է: «Լոյալության» փոփոխականության 52%-ը բացատրվում է այլ կոնցեպտներով և փոփոխականներով, որոնք հետազոտությունում չեն դիտարկվել:

Այսպիսով, մոդելի վերլուծությունից բխում է եզրակացություն.

- **Իշխանությունների նկատմամբ Երևանի բնակչության լոյալության կառավարման հարցում առաջնահերթ նշանակություն ունեն 2018 թ. հեղափոխության նկատմամբ դիրքորոշումը պայմանավորող մտավոր կառուցվածքի կառավարումը, տնտեսական ներկա վիճակի և առավելապես ապագա փոփոխության վերաբերյալ մտավոր կառուցվածքի կառավարումը և պատերազմի ու դրա արդյունքների վերաբերյալ մտավոր կառուցվածքի կառավարումը:**

Վերջին դրույթի՝ «Պատերազմ» մտավոր կառուցվածքի առնչությամբ հարկ է նշել, որ ներկայումս դրա հիման վրա քաղաքական դիսկուրսում առաջացել են նոր կոնցեպտներ՝ Արցախի կարգավիճակ, Արցախի բնակչության անվտանգության ապահովում, Հայաստանի անվտանգություն, Հայաստանի սահմանների և տարածքի անձեռնմխելիություն, «Զանգեզուրի միջանցք»: Նշված կոնցեպտների նկատմամբ դիրքորոշումները պայմանավորող հիմնարար կոնցեպտ է մնում Հայաստանի հիմնական ռազմական դաշնակցի/հովանավորի նույնականացումը:

Մեր հետազոտությամբ հավաքագրված տվյալների շրջանակում հնարավոր չէր մոդելներում անհրաժեշտ և բավարար մեթոդական հստակությամբ ընդգրկել այդ մտավոր համալիրները: Դրանք գնահատելու և լոյալության մոդելը մոդիֆիկացնելու համար անհրաժեշտ են նոր տվյալներ:

Կարևոր առանձնահատկություններ է բացահայտում մոդելում մտավոր կառուցվածքների միջև կոռելյացիաների դիտարկումը: «Տնտեսություն» և «Հեղափոխություն» կոնցեպտները միմյանց դրականորեն ուժեղ կոռելացված են (շաղկապված են): Կոռելյացիայի գործակիցը՝ 0.46: Դա նշանակում է, որ տնտեսական վիճակի նկատմամբ դրական դիրքորոշումները ունակ են բարձրացնելու հեղափոխության վերաբերյալ դրական դիրքորոշումները:

«Տնտեսություն» և «Պատերազմ» կառուցվածքների միջև կոռելյացիան փոքր է և բացասական: Եթե հաշվի առնենք, որ «Պատերազմ» կոնցեպտի բարձր արժեքները նշանակում են բարձր դժգոհություն, ապա կարելի է եզ-

բակացնել, որ «Տնտեսություն» կոնցեպտն ունի «Պատերազմ» կոնցեպտի բացասական ազդեցությունը նվազեցնելու ներուժ, և հակառակը՝ «Պատերազմ» կոնցեպտի բացասական բովանդակության հզորացումն ունի «Տնտեսություն» կառուցվածքի դրական ազդեցությունը նվազեցնելու ներուժ։

Բացասական կոռելացված են նաև «Պատերազմ» և «Հեղափոխություն» կոնցեպտները՝ կոռելյացիոն գործակիցը՝ -0.20։ Դա նախ՝ նշանակում է, որ այս երկու կոնցեպտների բովանդակությունները շաղկապված են, և երկրորդը՝ այդ շաղկապվածությունը մարդկանց գիտակցությունում առաջացնում է կոգնիտիվ դիսոնանս։ Մարդիկ պետք է կողմնորոշվեն, թե որն է ավելի կարևոր՝ տնտեսական բարենպաստ և բարելավվող պայմաննե՞րը, թե՞ պատերազմի հետ կապված անհաջողությունների հաղթահարումը։

Այսպիսով, Երևանի բնակչության լոյալության մոդելն ադեկվատ է և բովանդակային տեսակետից ճիշտ է նկարագրում հասարակական գիտակցությունում դրա պայմանավորվածությունը «Հեղափոխություն», «Պատերազմ» և «Տնտեսություն» մտավոր կառուցվածքներով։

«Լոյալություն», «Հեղափոխություն», «Պատերազմ» և «Տնտեսություն» մտավոր կառուցվածքների և դրանց բովանդակային տարրերի միջև ազդեցությունների մոդելը գիտական հիմք է Երևանի հասարակության քաղաքական լոյալության և դրա հետ կապված ավելի լայն խնդիրների ռազմավարական պլանավորման և ռազմավարական կառավարման համար։

REFERENCES

Atanesyan A., Mkrtichyan A. (2023). Youth perceptions of the war in Ukraine and its possible consequences (on the case of Armenian youth in Yerevan) Journal of Sociology: Bulletin of Yerevan University, Vol. 14 1(37), pp. 07-28. DOI 10.46991/BYSU:F/2023.14.1.007

Atanesyan A.V., Mkrtichyan A.E. (2022) Armenia between Russia and the West: Foreign Political Priorities in Public Opinion. *Sotsiologicheskie issledovaniya* [Sociological Studies]. No 12. P. 88-100 DOI 10.31857/S013216250022088-9 (in Russian)

Berndt, A.E. (1998). "Typical" model features and their effects on goodness-of-fit indices. Presented at the 106th Annual Convention of the American Psychological Association, San Francisco, CA. http://reifman-sem.blogspot.com/2007/02/at-wednesdays-class-well-make-sure.html#:~:text=The%20AMOS%20output%20will%20report,and%20thus%20usually%20produces%20results

Holbert, Ch. (2023) Sample Size Determination for Correlation Studies. March 25. URL: https://www.cfholbert.com/blog/sample-size-correlation/#:~:text=As%20a%20final%20note%2C%20the,power%2C%20even%20with%20large%20samples

Igolkina, A.A., Samsonova M.G. (2018) Method SEM: Structural equation modeling in molecular biology. *Biophizika* [Biophisics]. V. 63, № 2. pp. 213-224. (in Russian)

Kline R.B. (2005) Principles and practice of structural equation modeling. The Guilford Press, 2005.

Miljko (2020) Statistische Beratung Leonardo Miljko. How to interpret SEM model fit results in AMOS. URL: https://www.StatistischeDatenAnalyse.de/images/services/How_to_interpret_SEM_model_fit_results_in_AMOS.pdf .

Ostipenko R.I. (2013) Brief overview and prospects for the development of structural modeling methods in domestic science and practice. *Perspektivy nauki I obrazovaniya* [Prospects for science and education]. № 5, pp. 56-99 (in Russian).

Conflicts of Interest

The author declares no ethical issues or conflicts of interest in this research.

Ethical Standards

The author affirms this research did not involve human subjects.